

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/6

13 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Գլեբեկ» ՍՊԸ 16.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300363/02 որոշման դեմ:

«Գլեբեկ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Գլեբեկ» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ սույն թվականի հոկտեմբերի 1-ի ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի թիվ 300363/02 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության և տուգանվել 20.000 դրամի չափով 19.09.2015թ.-ի դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 2.074.128 դրամի չափով պարտք ունենալու պատճառով: Սակայն նշված պարտավորությունը վճարված է եղել ԻնեկոՕնլայն համակարգի միջոցով նույն օրը՝ 19.09.2015 թ.-ին /կից ներկայացվում է վճարման հանձնարարականը/: Պարտավորությունն առաջացել է 15.09.2015թ. 3-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարից, այսինքն՝ ընդամենը 4 օր առաջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գանգատաբերը խնդրում է առոչինչ ճանաչել վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300363/02 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 01.10.2015 թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Գլեբեկ» ՍՊԸ-ի տնօրեն Հակոբ Մնացականյանը սահմանված ժամկետում չի վճարել 2015 թ-ի 3-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 01.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300363/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Հակոբ Մնացականյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ գումարով 20.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 18.75 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ»:

Քննարկվող դեպքում «Գլեբել» ՍՊԸ-ի 2015 թ-ի 3-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը կազմել է 2.061.758 դրամ, որը «Գլեբել» ՍՊԸ-ի կողմից պետք է վճարվեր մինչև 2015 թ-ի սեպտեմբերի 15 ընկած ժամանակահատվածում: Սակայն, շահութահարկի կանխավճարի նշված գումարը պետական բյուջե է վճարվել միայն 2015 թ-ի սեպտեմբերի 19-ին, այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի համաձայն. «Հարկերը սահմանված ժամկետներում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով»:

Տվյալ դեպքում «Գլեբել» ՍՊԸ տնօրենի կողմից թույլ է տրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածով նախատեսված խախտում, որի համար կիրառվել է նույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 01.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300363/02 որոշմը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ